ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. նոյեմբերի 13-ին, N 306 -Ա

ՆԱՐԵ ՇԱՎԱՐՇԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Գ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետով, 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման 4-րդ կետով և հիմք ընդունելով Նարե Խաչատրյանի 2024 թվականի նոյեմբերի 13-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Նարե Խաչատրյանին 2024 թվականի նոյեմբերի 13-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Գ. Ղափանցյանի անվան հ. 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Գ. Ղափանցյանի անվան հ. 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նարե Խաչատրյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 13.11.2024 12:11:37 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ